ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ

ՄԱՐՄՆԻ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԱՅԻՆԿԵՆՏՐՈՆԻ

ՊԵՏ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ԺԻՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն Պողոսյան,

Հայտնում եմ Ձեզ, որ 2025 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև դեկտեմբերի 26 ը ընկած ժամանակահատվածում ՀՀ Արմավիրի մարզի բուսասանիտարական մոնիթորինգի շրջանակներում թվով 12 բնակավայրերում իրականացրել եմ մոնիթորինգ բույսերի կարանտին վնասակար օրգանիզմների հայտնաբերման, նմուշառման և ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ փորձաքննության ներկայացնելու նպատակով: Այդ գործընթացի ընթացքում իրականացրել եմ 56 նմուշառում, որը լաբորատորիայի կողմից կատարվել է թվով 109 փորձաքննություն: Արդյունքում հայտնաբերվել է կալիֆորնյան վահանակիր, խաղողի ֆիլոքսերա, արևելյան պտղակեր, լոլիկի ցեց, արևմտյան ծաղկային թրիփս, սալորենու օսպա, պտուղների բակտերիալ այրվածք, կարանտին վնասակար օրգանիզմներ:

Դեկտեմբեր ամսվա ընթացքում այցելություններ եմ կատարել Կոտայքի և Արագածոտնի մարզերի ջերմատներ ՀՀ-ից արտահանվող ծաղիկների նմուշառման, ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ լաբորատոր փորձաքննության, կարանտին վնասակար օրգանիզմների հայտնաբերման նպատակով:

ՍԱՏՄ ղեկավարի 2025 թ. օգոստոսի 08- ի N 1474-Ա հրամանի համաձայն մարզում գործող պեսցիդիտների և ագրոքիմիկատների իրացմամբ զբաղվող շուրջ 8 տնտեսվարող սուբյեկտների մոտ մասնակցել եմ դիտարկման գործընթացին, ինչի արդյունքում թունաքիմիկատների որակական ցուցանիշների համապատասխանությունը պարզելու նպատակով ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ լաբորատոր փորձաքննության է ներկայացվել թվով 22 թունաքիմիկատների նմուշներ:

Մասնակցել եմ նաև ՀՀ ներկրված հացահատիկի նմուշառման և լաբորատոր փորձաքննության գործընթացին, ինչպես նաև շաբաթական 2 օր սիգի ձվադրման ժամանակահատվածում ձկան վաճառքի մշտադիտարկումներին:

ՍԱՏՄ Արմավիրի մարզային կենտրոնի փորձագետ՝ Մ. Մարկոսյան

26.12.2025 թ.